ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԳԻՏՆԱԿԱՆՆ ՈՒ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀՄՈՒՏ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉԸ

(ակադեմիկոս Վիլեն Պարույրի Հակոբյանի ծննդյան 70-ամյակի առթիվ)

Ակադեմիկոս Վ.Պ.Հակոբյանի հոբելյանը լավագույն պատեհությունն է՝ գնահատելու արժանավոր գիտնականի, բժշկական ծառայության գնդապետի, Հայ Առաքելական Եկեղեցու Հոգևոր Բարձրագույն խորհրդի անդամի, Հայաստանի գիտական ու կրթական բնագավառների երախտավորի բազմամյա արգասավոր գործունեությունը:

Վ.Պ.Հակոբյանը ծնվել է 1938թ. մայիսի 1-ին, Հայկական ԽՍՀ Թալինի շրջանի Գառնահովիտ գյուղում: 1960թ. ավարտել է Երևանի պետական բժշկական ինստիտուտի բուժական ֆակուլտետը, աշխատել է Արթիկի շրջանում՝ որպես գյուղական բժշկական տեղամասի վարիչ: 1962թ. տեղափոխվել է մայր բուհի՝ գիտամանկավարժական հարուստ ավանդույթներ ունեցող ֆարմակոլոգիայի ամբիոն, որի աշխատանքներն ավելի քան կես դար գլխավորել է հանրապետության դեղաբանության դպրոցի հիմնադիր, ՀՀ ԳԱԱ անդամ, պրոֆեսոր Ս.Հ.Միրզոյանը:

1967թ. պաշտպանել է թեկնածուական, իսկ 1977թ.՝ դոկտորական թեզերը:

Բեղուն է Վ.Պ.Հակոբյանի հասարակական գործունեության ուղին. 1971թ. մինչև 1987թ. ակտիվորեն մասնակցել և արդյունավետ գործունեություն է դրսևորել բուհի աշխատանքների տարբեր օղակներում՝ արտասահմանցի ուսանողների, ապա՝ բուժական ֆակուլտետի դեկան, կուսկոմիտեի առաջին քարտուղար, ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, 1987-2006թթ. բժշկական համալսարանի (ԵՊԲՀ) ռեկտոր, 1994-2006թթ. ԵՊԲՀ ֆարմակոլոգիայի ամբիոնի վարիչ, 2006թ.-ից առ այսօր՝ ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար և նախագահության անդամ:

1987 թվականին ընտրվելով Երևանի պետական բժշկական համալսարանի ռեկտորի պատասխանատու և պատվավոր պաշտոնում՝ Վ.Պ.Հակոբյանը 19 տարի շարունակ ցուցաբերել է իրեն բնորոշ կազմակերպչի և նորարարի մեծ հմտություն: Հիշենք թեկուզ անցումային

շրջանի 1991-94 թվականները. տնտեսական ու էներգետիկ ճգնաժամը. սակայն այդ պայմաններում անգամ Երևանի պետական բժշկականը հանրապետության այն միակ ԲՈՒՀ-ն էր, որ կարողացավ ունենալ անխափան էլեկտրաէներգիա և ջեռուցում, և ոչ միայն ապահովեց իր աշխատանքի բնականոն գործընթացը, այլև՝ նկատելիորեն վերընթաց ապրեց:

Հետևողական աշխատանքների շնորհիվ մեծացավ համալսարանի միջազգային ճանաչումը: Անուրանալի են նրա ծառայությունները արտասահմանյան ուսանողների ներգրավման, անգլալեզու ուսուցման համակարգը ստեղծելու, համալսարանական կլինիկական հիվանդանոցներ և հանրակացարաններ ձեռք բերելու գործում: Վստահորեն կարելի է ասել, որ նաև Վ.Պ.Հակոբյանի ջանքերի շնորհիվ է, որ բժշկական համալսարանը դարձել է աշխարհի բժշկական բարձրագույն ուսումնական հաստատություններից մեկը, որի դիպլոմը ճանաչվում է Եվրոպայի, Ամերիկայի, Մերձավոր Արևելքի, Ասիայի բազմաթիվ երկրներում:

Ուսումնական գործընթացում ուսուցման նորագույն մեթոդների և տեխնոլոգիաների ներդրման համար ակադեմիկոս Վ.Պ.Հակոբյանն արժանացել է դեռևս նախկին ԽՍՀՄ ժողովրդական կրթության պետական կոմիտեի դիպլոմին:

Ակադեմիկոս Վ.Պ.Հակոբյանի հետևողական գործունեության շնորհիվ 1991թ. Երևանի պետական բժշկական ինստիտուտը անվանվեց մեծն բժշկապետ Մխիթար Հերացու անվամբ, իսկ 1995թ. ինստիտուտը վերակազմավորվեց համալսարանի:

Վաստակաշատ բժիշկ-գիտնականի անունը վաղուց է դուրս եկել հանրապետության սահմաններից և ձեռք բերել միջազգային ճանաչում: Նա ընտրվել է անոթաբանների միջազգային քոլեջի գիտական խորհրդի պատվավոր անդամ (Նյու-Յորք, 1994): Դեղագետների միջազգային ֆեդերացիայի անդամ (FIP) (Հագյու, Նիդերլանդներ, 1996թ.): Ֆարմակոլոգիայի միջազգային գիտական ընկերության անդամ (IUPHAR) (Բրյուսել, 1998թ.): Ուղեղային արյունահոսքի և նյութափոխանակության միջազգային ընկերության անդամ (ISCBFM) (Բեռլին, 2003թ.): Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության - Բժշկական կրթության փորձագիտական խմբի անկախ փորձագետ (Բրյուսել, 2001), Լեհաստանի բժշկական գիտությունների ազգային ակադեմիայի (Վարշավա, 1997) և շուրջ 7 միջազգային այլ ակադեմիաների անդամ:

Ակադեմիկոս Վ.Պ.Հակոբյանն անդամակցել է նաև մի շարք հանդեսների խմբագրակազմերին: Հանդիսացել է ՀՀ ԳԱԱ «Հայաստանի բժշկագիտություն» հանդեսի գլխավոր խմբագիր (1989-2008), Ռուսաստանի բժշկական գիտությունների ակադեմիայի «Փորձարարական և կլինիկական ֆարմակոլոգիա» հանդեսի, Իրանի Իսլամական Հանրապետության «Բժշկական միջազգային ամսագրի» և մի շարք այլ հանդեսների խմբագրությունների խորհրդի անդամ, Բժշկական խմբա-

գրությունների միջազգային ընկերության «Հույս» նախագծի մասնակից (WAME) (Վիրջինիա. ԱՄՆ, 1996):

Ակադեմիկոս Վ.Պ.Հակոբյանի գիտամանկավարժական գործունեությունն արտացոլված է նրա ավելի քան 270 աշխատություններում (որոնց մեծ մասը՝ միջազգային գիտական հանդեսներում), այդ թվում՝ 6 մենագրության (որից 2-ը հրատարակվել է Մոսկվայում, 1-ը՝ Աթենքում), ուսումնամեթոդական 11 ձեռնարկի, ֆարմակոլոգիայի 3 դասագրքի՝ բժշկական բուհերի ուսանողների համար: Իր գործընկերների հետ համատեղ գրած այդ դասագրքերը ֆարմակոլոգիայի հայերեն առաջին դասագրքերն են Հայաստանում: Ստացել է 14 հեղինակային արտոնագիր:

Բավական է նշել, որ նրա աշխատանքները մեծ հետաքրքրություն են առաջացրել և բազմիցս մեջբերվել համաշխարհային բժշկագիտական գրականության մեջ: Նա բազմիցս հրավիրվել է աշխարհի տարբեր երկրներ և սկսած 1967թ. զեկուցումներով հանդես եկել միջազգային բազմաթիվ գիտաժողովներում (ԱՊՀ երկրներ, ԱՄՆ, Ֆրանսիա, Իտալիա, Իսպանիա, Կանադա, Գերմանիա, Իսրայել, Իրան, Չինաստան, Սինգապուր, Հնդկաստան և այլն):

Վ.Պ.Հակոբյանը, ով պրոֆ. Ս.Հ.Միրզոյանի ղեկավարությամբ ֆարմակոլոգիայի ամբիոնում իր գիտական աշխատանքները սկսել է դեռևս ուսանողական տարիներին՝ 3-րդ կուրսից, տասնամյակներ շարունակ զբաղվել է կենտրոնական նյարդային համակարգի արյան շրջանառության ուսումնասիրության հարցերով, մասնավորապես կենտրոնական նյարդային համակարգի արյան շրջանառության վրա ընդերածին կենսաակտիվ նյութերի ազդեցության և ինքնակարգավորման մեխանիզմների, ինչպես նաև, բնականոն պայմաններում և ախտաբանական վիճակներում ուղեղի արյան հեմոդինամիկայի կարգավորման գործում գամմա-ամինոկարագաթթվի (ԳԱԿԹ) և նրա ընկալիչների դերի բացահայտմամբ: Նա հաջողությամբ զարգացրել է ուղեղային արյան շրջանառության ինքնակարգավորման նյարդաքիմիական տեսությունը:

Կենտրոնական նյարդային համակարգի ինտեգրատիվ գործունեության մեջ զանազան նյարդաակտիվ գործոնների դերի նպատակաուղղված հետազոտությունների շնորհիվ Վ.Պ.Հակոբյանը աշխարհում առաջին անգամ բացահայտեց նյարդաակտիվ ամինաթթուների կարգավորիչ դերը ուղեղային արյան շրջանառության գործում: Մասնավորապես, ակադեմիկոս Վ.Պ.Հակոբյանի կողմից բացահայտված է, որ կենդանիների ուղեղային արյունահոսքի ընկճման պայմաններում, շարժողական ակտիվության բարձրացումը նպաստում է ուղեղային արյունահոսքի բարելավմանը, որն ունի գործնական մեծ նշանակություն սակավաշարժ կենսաձևի պայմաններում ուղեղային արյունահոսքի խանգարման կանխարգելման համար:

Ակադեմիկոս Վ.Պ.Հակոբյանի ղեկավարությամբ պաշտպանվել են 6 դոկտորական և 17 թեկնածուական թեզեր:

Վ.Պ.Հակոբյանը իր ողջ աշխատանքային գործունեության ընթացքում իրեն դրսևորել է որպես բարեխիղճ, բանիմաց, նախաձեռնող, ունակ գիտնական, որի էության մեջ լիովին ներդաշնակում են նվիրյալ քաղաքացին, զգայուն ու հայրենասեր մարդը:

Պատշաճ ձևով գնահատելով մեր անկախ պետականության համար ֆիզիկապես ամուր, առողջ և մարտունակ բանակ ունենալու և բանակը բարձրորակ զինվորական բժիշկներով ապահովելու կարևորությունը՝ Վ.Պ.Հակոբյանի անմիջական նախաձեռնությամբ և ղեկավարությամբ 1994թ. համալսարանում հիմնադրվեց և մինչև օրս հաջողությամբ գործում է ռազմաբժշկական ֆակուլտետը: Տարիներ շարունակ Վ.Պ.Հակոբյանի անձնական նախաձեռնությամբ համալսարանը ստանձնել էր հայկական բանակի զորամասերից մեկի շեֆությունը: Հայրենիքի պաշտպանության և բանակաշինության գործընթացում ներդրած ուրույն ավանդի համար նրան շնորհվեց բժշկական ծառայության գնդապետի կոչում և նա պարգևատրվեց «Դրաստամատ Կանայանի», ինչպես նաև ԼՂՀ-ի «Մայրական երախտագիտություն» մեդալներով, ՀՀ և ԼՂՀ Զինված ուժերի պատվոգրերով, անհատական զենքով:

Վ.Պ.Հակոբյանը ջանք ու եռանդ չի խնայել, որպեսզի բժշկական համալսարանի ուսանողները ստանան մասնագիտական խոր գիտելիքներ, դառնան որակյալ մասնագետներ: Մեծ է Վ.Պ.Հակոբյանի վաստակը՝ որպես հմուտ ու ինտելեկտուալ մանկավարժի, որպես մեծ հոգեբանի, որն օժտված է դասախոսական մեծ արվեստով:

Որպես բժշկական բարձրագույն կրթության հմուտ կազմակերպիչ ու անվանի գիտնական, ակադեմիկոս Վ.Պ. Հակոբյանը ՀՀ նախագահի հրամանագրով պարգևատրվել է «Մխիթար Հերացու» մեդալով, «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշանով, արժանացել է Հայաստանի Հանրապետության նախագահի մրցանակին՝ Հունաստանում անգլերեն լեզվով հրատարակված «Հիպոկինեզիա և ուղեղային արյան շրջանառություն» մենագրության համար:

Իր բազմաբնույթ գործունեության մեջ Վ.Պ.Հակոբյանը միաժամանակ ծավալում է հասարակական գործունեություն, որի շնորհիվ արժանացել է «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչմանը, ինչպես նաև՝ ՀՀ ոստիկանության պետի «Համագործակցության ամրապնդման համար» հուշամեդալին: Առողջապահության ու գիտության բնագավառներում ներդրած ավանդի համար պարգևատրվել է ՀՀ վարչապետի ոսկե հուշամեդալով, ինչպես նաև՝ ՀՀ Ազգային Ժողովի շնորհակալագրով:

Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդը բարձր գնահատելով Վ.Պ.Հակոբյանի ազգանվեր աշխատանքը, նրան պարգևատրեց հոգևոր բարձրագույն պարգևով՝ «Սուրբ Սահակ – Սուրբ Մեսրոպ» շքանշանով: Նա արժանացել է նաև «Ամենափրկիչ Քրիստոսի տաճարի» Մոսկվայի կաթողիկոսության երախտավորագրին:

Բժշկագիտության և մարդասիրության բնագավառում, ինչպես նաև՝

հասարակական գործունեության մեջ, Վ.Պ.Հակոբյանը իր արժանի ծառայությունների արդյունքում պարգևատրվել է Ալբերտ Շվեյցերի ոսկե մեդալով, Վերնադսկու անվան "Ոսկե Աստղ" բարձրագույն պարգևով, Ֆ.Նանսենի անվան ոսկե հուշամեդալով, Ռուսաստանի Ֆեդերացիայի Բժշկատեխնիկական գիտությունների ակադեմիայի 10-ամյակի ոսկե մեդալով և այլն:

ՀՀ ԳԱԱ նախագահությունը, ՀՀ Առողջապահության նախարարությունը և ՀՀ ԳԱԱ «Հայաստանի բժշկագիտություն» հանդեսի խմբագրության աշխատակազմը շնորհավորում են սիրելի Վիլեն Պարույրի Հակոբյանին, մաղթելով նրան քաջառողջություն, երջանկություն և հետագա աշխատանքային հաջողություններ՝ ի բարօրություն մեր հայրենիքի: